Canon

Zoemini 2

Mini Photo Printer
Օգտվողի ձեռնարկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ
Ընթերցեք նախքան օգտագործելը .....էջ 2-4

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Փաթեթում ներառված տարրեր .....էջ 5
Ապրանքի առանձնահատկությունները .....էջ 5

ՍԿԻԶԲ
Լիցքավորում .....էջ 6
Հոսանքի միացում/անջատում .....էջ 7
Լիցքավորեք թուղթը .....էջ 7-8

LED ՑՈՒՑԻՉ .....էջ 9

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐ .....էջ 10

ՀԱՎԵԼՎԱԾԻ ՏԵՂԱԿԱՅՈՒՄԸ .....էջ 11-12

ՇԱՐԺԱԿԱՆ ՍԱՐՔԻ ԵՎ MINI PHOTO PRINTER-Ի ԶՈՒԳԱՎՈՐՈՒՄԸ
Android-ի և iOS-ի զուգավորումը .....էջ 13-14

ՕԳՏՎՈՂԻ ՄԻՋԵՐԵՍ
Գլխավոր էկրան .....էջ 15
Հիմնական ընտրացանկ .....էջ 15
Տպիչի կարգավորումներ .....էջ 16-17

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

ԸՆԹԵՐՑԵՔ ՆԱԽՔԱՆ ՕԳՏԱԳՈՐԾԵԼԸ

Տպիչն օգտագործելուց առաջ կարդացեք հետևյալ հրահանգները և անվտանգության ապահովման նախազգուշացումները:

Կանոնակարգող և անվտանգության մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս Կանոնակարգումների և երաշխիքի տեղեկատվական թերթիկը, որը ներառված է փաթեթի մեջ:

RMN՝ PP1003B
Կանոնակարգիչ պահանջների հետ համապատասխանությունը նույնականացնող մոդելային համարը (RMN) հատկացվում է կանոնակարգիչ նույնականացում կատարելու նպատակով:

ԶԳՈՒՇԱՑՈՒՄ Օգտագործվում է պոտենցիալ վտանգավոր իրավիճակը ցույց տալու համար, որը կարող է չխուսափելու դեպքում մահվան հանգեցնել կամ լուրջ մարմնական վնասվածք պատճառել:

- Հեռու պահեք երեխաներից և մանուկներից: Սարքավորումը սխալ օգտագործելու դեպքում կարող են առաջանալ խեղդամահության կամ դժբախտ պատահարների դեպքեր:
- Անմիջապես դադարեցրեք սարքի օգտագործումը, եթե նրանից ծուխ կամ տարօրինակ հոտ է գալիս, կամ այլ տարօրինակ բաներ են կատարվում:
- Մի օգտագործեք տպիչը, եթե մարտկոցը կամ սարքը ուռչել են:
- Մի օգտագործեք Բժշկական էլեկտրական սարքավորմանը մոտ: Այս սարքն արձակում է թույլ մագնիսականություն: Մի կանգնեք տեղադրված այնպիսի էլեկտրոնային սարքերին մոտ, ինչպիսին, օրինակ, կարդիոստիմուլյատորն է: Խնդրում ենք դիմել ձեր բժշկին, եթե տպիչը նման սարքին մոտ է հայտնվում:

ԶԳՈՒՇԱՑՈՒՄ Օգտագործվում է վտանգի կամ վնասի մակարդակը ցույց տալու համար, որը սարքի սխալ օգտագործման դեպքում կարող է մարմնական վնասվածք կամ գույքային վնաս պատճառել, ինչը չի դիտվում որպես ապրանքի թերություն:

- Ծայրահեղ եղանակային պայմաններում սարքը կարող է չտպել: Նախքան նորից տպել փորձելը թողեք, որ տպիչի ջերմաստիճանը կարգավորվի և համապատասխանի հանձնարարելի աշխատանքային ջերմաստիճանին՝ 15º-ից 32ºC:
- Խորհուրդ է տրվում սարքի լիցքավորումը կատարել 15º-ից 32ºC ջերմաստիճանային պայմաններում:
- Սարքը մաքրեք փափուկ, չոր շորով: Մի մաքրեք խոնավ շորով կամ շուտ գոլորշացող հեղուկներով, օրինակ, ներկի նոսրացուցիչով:
- Փակ պահեք վերին կափարիչը, որպեսզի փոշի ու այլ մասնիկներ չներթափանցեն սարքի մեջ:
- Հեռացրեք օդափոխության բացվածքները փակող ցանկացած օբյեկտ:
- Եթե սարքը ճիշտ չի աշխատում, դիմեք ձեր ներկայացուցչին, որից գնել եք այս ապրանքը կամ Canon-ի սպասարկման և աջակցման կենտրոնին՝ www.canon-europe.com/support հղումով:
- Էլեկտրամագնիսական միջամտության կամ էլեկտրաստատիկ լիցքաթափման պատճառով սարքը կարող է խափանվել, կամ կարող է առաջանալ հիշողության կորուստ կամ փոփոխում: Նման բան տեղի ունենալու դեպքում գնդասեղի կամ նմանատիպ առարկայի օգնությամբ սեղմեք սարքի ներքևի մասում գտնվող [ՎԵՐԱԿԱՅԵԼ] կոճակը:
- Մի օգտագործեք և մի թողեք սարքը արևի ուղիղ ճառագայթների ներքո: Նաև խուսափեք այնպիսի վայրերից, որտեղ հնարավոր են ջերմաստիճանի կտրուկ փոփոխություններ, խոնավության բարձր աստիճան, փոշու և կեղտի առկայությունը:
- Ցածր խոնավությամբ վայրերում տպիչը կարող է կուտակել ստատիկ էլեկտրական լիցքեր: Ձեռնարկեք անվտանգության միջոցներ նախքան տպիչն օգտագործելը:
- Տպիչը հեռու պահեք հեղուկներից կամ հեղուկ պարունակող տարաներից:
- Սարքն անհրաժեշտ է ազատվել պատշաճ կերպով, այլապես այն կարող է վնասվածք պատճառել կամ վնաս հասցնել: Խնդրում ենք սարքից ազատվել տեղի օրենսդրական պահանջներին համապատասխան կարգով:

ՄԱՐՏԿՈՑԻ ՄԱՍԻՆ

- Խորհուրդ է տրվում սարքն օգտագործելուց հետո ամբողջությամբ լիցքավորել մարտկոցը: Մարտկոցի պահպանումն ապահովելու համար խորհուրդ է տրվում տարին մեկ անգամ մարտկոցն ամբողջությամբ լիցքավորել նախքան չօգտագործելը: Եթե սարքի մարտկոցը վեց (6) ամսից ավելի թողնեք սպառվող լիցքավորմամբ, գուցե այլևս հնարավոր չլինի լիցքավորել ներկառուցված մարտկոցը:
- Սարքը ապամոնտաժելը կարող է հանգեցնել մարտկոցից արտահոսքի, պայթյունի, վնասի կամ մարմնական վնասվածքի:
- Երբեք չպահեք մարտկոցը բարձր ջերմաստիճանում, անմիջապես տաքացուցիչի կողքին կամ չոչնչացնեք այրման միջոցով:
- Մարտկոցից ազատվելիս խնդրում ենք հետևել տվյալ պետությունում գործող կանոնակարգումների պահանջներին: Մանրամասների համար խնդրում ենք դիմել տեղի պետական մարմիններին:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՓԱԹԵԹՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ՏԱՐՐԵՐ

Mini Photo Printer



USB մալուխ

Կանոնակարգումների և երաշխիքի տեղեկատվական թերթիկ

Canon ZINK® լուսանկարների թուղթ (10 թուղթ)

ԱՊՐԱՆՔԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ





① Վերին կափարիչ

② Թղթի վաք
(Տեսանելի է վերին կափարիչը բց լինելու դեպքում)

③ Տպելու արտածման բնիկ

④ Կարգավիճակի LED լույս

⑤ Լիցքավորման LED լույս

⑥ USB միացք (լիցքավորման համար)

⑦ Վերակայման կոճակ
(Սարքը վերակայելու համար սեղմեք գնդասեղով)

⑧ Հոսանքի կոճակ

ՍԿԻԶԲ

A) ԼԻՑՔԱՎՈՐՈՒՄ



Լիցքավորման կարգավիճակի LED լույս

Լիցքավորում	Կարմիր	
Ամբողջությամբ լիցքավորված	Կանաչ	

Տպիչն ունի ներկառուցված մարտկոց: Մինչ տպիչն օգտագործելը այն ամբողջությամբ լիցքավորեք մարտկոցը՝ սարքի հետ տրամադրված USB մալուխի միջոցով:

① Տրամադրված USB մալուխի փոքր ծայրը միացրեք սարքին, իսկ մյուս ծայրը՝ լիցքավորելի USB հարմարիչին:

② Լիցքավորման LED լույսը կվառվի կարմիր՝ ցույց տալու, որ սարքը լիցքավորվում է:

③ Ամբողջությամբ լիցքավորվելուն պես LED լույսը կկանաչի:
– Մարտկոցի աշխատանքի ժամանակը կարող է տատանվել՝ կախված մարտկոցի վիճակից, աշխատանքային վիճակից և միջավայրի պայմաններից:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ Ցուցումները կամ բովանդակությունը կարևոր են և դրանց հետևելը պարտադիր է:

Տեղեկություններ USB մալուխի մասին

ԶԳՈՒՇՈՒԹՅԱՄԲ ՎԱՐՎԵՔ USB ՄԱԼՈՒԽԻ ՀԵՏ, ԵՐԲ ԼԻՑՔԱՎՈՐՈՒՄ ԵՔ

- Մալուխի վրա ծանր առարկաներ մի՛ դրեք:
- USB մալուխը ջերմությանը մոտ մի՛ դրեք:
- Մի՛ քերծեք, վնասեք, ոլորեք կամ ուժեղ մի՛ ձգեք մալուխը:
- Մալուխը մի՛ միացրեք կամ անջատեք հոսանքի վարդակից թաց ձեռքերով:
- Խուսափեք խիստ բարձր/ցածր ջերմաստիճանային կամ խոնավ պայմաններից:
- Լիցքավորելուց հետո USB մալուխն անջատեք հոսանքի աղբյուրից:
- Լիցքավորման համար օգտագործեք տրամադրված USB մալուխը:

B) ՀՈՍԱՆՔԻ ՄԻԱՑՈՒՄ/ԱՆՋԱՏՈՒՄ



① Սեղմեք և սեղմած պահեք Հոսանքի կոճակը (⏻) Լիցքավորման LED լույսը 3 անգամ կթարթի կանաչ գույնով, ինչը կնշանակի, որ սարքը միացված է:

② Երբ Կարգավիճակի LED ցուցիչն առանց թարթելու վառվում է սպիտակ լույսով, սարքը պատրաստ է օգտագործման:

③ Սեղմեք և սեղմած պահեք հոսանքի կոճակը (⏻)՝ սարքն անջատելու համար:

ԻՆՔՆԱՇԽԱՏ ԱՆՋԱՏՈՒՄ

- Սարքն ինքնաշխատ կերպով կանջատվի՝ 3 րոպե (սկզբնադիր) անգործուն մնալու դեպքում:
- Օգտվողը կարող է հավելվածից փոխել ժամանակը (3 րոպե/5 րոպե/10 րոպե):

C) ԼԻՑՔԱՎՈՐԵՔ ԹՈՒՂԹԸ





① Հեռացրեք վերին կափարիչը՝ այն սահեցնելով առաջ՝ սլաքի ուղղությամբ:

② Բացեք լուսանկարների թղթի մեկ փաթեթը (10 թուղթ + կապույտ SMART SHEET®-ը):



Կապույտ SMART SHEET®-ը՝ տակը, իսկ լուսանկարների թղթերը՝ վրան: Բոլոր տարբերանշանները դեպի ներքև:

③ Լուսանկարների բոլոր 10 թղթերը և մեկ կապույտ SMART SHEET®-ը տեղադրեք լուսանկարների թղթի դարակում:
- Լուսանկարների թղթերը դարսեք կապույտ SMART SHEET®-ի վրա՝ համոզվելով, որ գծակոդը և լուսանկարների թղթերի տարբերանշանները դեպի ներքև են նայում:

④ Հետ տեղադրեք կափարիչը տպիչի վրա: Ճիշտ փակելու դեպքում այն պետք է կտտոցով տեղն ընկնի:
- Առաջին տպելուց առաջ կապույտ SMART SHEET®-ը ավտոմատ կանցնի տպիչի միջով:

ՃԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ Ցուցումները կամ բովանդակությունը կարևոր են և դրանց հետևելը պարտադիր է:

ՍԱՐՔԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

- Սարքն օգտագործեք և պահեք 15º-32º C ջերմաստիճանի և 40-55% հարաբերական խոնավության հանձնարարելի պայմաններում:
- Մշտապես թարմացրեք սարքի ներկառուցված ծրագիրը: Ստուգելու համար արդյոք ներկառուցված ծրագիրը կարիք ունի թարմացման՝ բացեք Canon Mini Print հավելվածը: Անցեք Հիմնական ընտրացանկ > Կարգավորումներ > Տպիչներ, ընտրեք ձեր սարքը և հպեք «Տեղեկություններ սարքավորման մասին» կետին, այնուհետև սեղմեք «Ներկառուցված ծրագրի նորացում»:
  – Համոզվեք, որ ձեր շարժական սարքը կապակցված է համացանցին: Ներկառուցված ծրագիրը թարմացնելու համար տպիչը պետք է լիցքավորված լինի առնվազն 50%-ով:
- Համոզվեք, որ օգտագործում եք Canon Mini Print հավելվածի վերջին տարբերակը: Եթե ձեր հավելվածներն ինքնաշխատորեն չեն թարմացվում, բացեք հավելվածների խանութը և ստուգեք՝ արդյոք պետք է թարմացնել:

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐԻ ԹՈՒՂԹ ՕԳՏԱԳՈՐԾԵԼԻՍ

- Լիցքավորեք միայն 10 թուղթ և 1 կապույտ SMART SHEET®. Մի լիցքավորեք ավելին, քանի որ դա կարող է թղթի խցանում կամ տպման սխալներ առաջացնել:
- Տպման օպտիմալ արդյունք ստանալու համար օգտագործեք Canon Zoemini տպիչների համար նախատեսված լուսանկարների թուղթը:
  – Լրացուցիչ թուղթ կարող եք գնել Canon Mini Print հավելվածի միջոցով՝ հիմնական ընտրացանկում հպելով «Գնել թուղթ»:
- Խցանվելու դեպքում պարզապես անջատեք տպիչը և կրկին միացրեք, որպեսզի խցանումն ավտոմատ կերպով բացվի: Մի փորձեք քաշելով հանել թուղթը:
- Տպելու ընթացքում մի ձգեք կամ քաշեք լուսանկարների թուղթը:
- Զգուշությամբ վարվեք լուսանկարների թղթի հետ, որպեսզի չվնասեք կամ չծալեք այն:
- Լիցքավորելիս աշխատեք չաղտոտել լուսանկարների թուղթը: Եթե լուսանկարների թուղթը աղտոտվի կամ վնասվի, կարող է խցանում կամ տպման սխալ առաջանալ:
- Թղթի նոր փաթեթը բացեք երբ պատրաստ եք լիցքավորել այն տպիչի մեջ:
- Թուղթը մի դրեք արևի անմիջական ճառագայթների տակ կամ խոնավ տեղում:
- Թողեք լուսանկարների թուղթը այնպիսի վայրում, որտեղ ջերմաստիճանը կամ խոնավությունը չեն համապատասխանում փաթեթի վրա նշված պայմաններին: Դա կարող է անդրադառնալ տպված լուսանկարի որակի վրա:

ԿԱՊՈՒՅՏ SMART SHEET®-Ի ՄԱՍԻՆ

- Թղթի յուրաքանչյուր փաթեթ պարունակում է 10 լուսանկարի թուղթ և 1 կապույտ SMART SHEET®.
- Տպման օպտիմալ որակ ստանալու համար կապույտ SMART SHEET®-ը և լուսանկարների թուղթը լիցավորեք միևնույն փաթեթից: Յուրաքանչյուր կապույտ SMART SHEET® հատուկ նախատեսված է այն թղթի փաթեթի համար, որում այն գտնվում է:
- Առաջին տպումից առաջ կապույտ SMART SHEET®-ն ավտոմատ անցնում է սարքի միջով՝ տպիչը մաքրելու և տվյալ փաթեթի թղթերի համար (10 թուղթ) տպման որակը լավարկելու համար:
- Պահպանեք կապույտ SMART SHEET®-ը, այն դեն նետեք միայն փաթեթում առկա լուսանկարների բոլոր 10 թղթերը տպելուց հետո: Եթե տպման որակը չի գոհացնում, կարող եք կրկին օգտագործել կապույտ SMART SHEET®-ը, եթե թուղթը նույն փաթեթից է: Պարզապես կապույտ SMART SHEET®-ը գծակոդը դեպի վար նայող կողմով սահեցրեք լուսանկարների մնացած թղթերի տակ:
- Այլ փաթեթի կապույտ SMART SHEET® օգտագործելիս տպման որակը կարող է նվազել:

LED ՑՈՒՑԻՉ

Կարգավիճակ	Ռեժիմի LED լույս	Կարգավիճակի LED լույս
Միացված	Սեղմել և սեղմած պահել հոսանքի կոճակը	Սպիտակ > Սպիտակ (Լուսաբռնկում)
Սպասման ռեժիմ	Սարքը կապակցված ՉԷ հավելվածի հետ	Սպիտակ (Լուսաբռնկում)
	Սարքը կապակցված է հավելվածի հետ	Սպիտակ
Անջատված	Սեղմել և սեղմած պահել հոսանքի կոճակը	Անջատված
Կապույտ SMART SHEET®-ի ընդունում	Երբ սարքը ընդունում է կապույտ SMART SHEET®-ը	Դեղին>Սպիտակ>Մուգ վարդագույն> Սպիտակ>Երկնագույն>Սպիտակ (ցիկլային)
Լուսանկարի տպում	Երբ սարքը լուսանկար է տպում	Դեղին>Սպիտակ>Մուգ վարդագույն> Սպիտակ>Երկնագույն>Սպիտակ (ցիկլային)
Կապույտ SMART SHEET® -ի սխալ	Երբ սարքը հայտնաբերում է, որ կապույտ SMART SHEET® է տեղադրվել, կամ այլ կապույտ SMART SHEET®-ի սխալ	Կապույտ (Լուսաբռնկում)
Պատրաստում տպելուն	Նախապատրաստում է տպելուն	<< >> Սպիտակ (Շողացող)
Թղթի խցանում / Կափարիչը բաց է	Երբ թուղթը խցանվել է, կամ տպիչի կափարիչը բաց է	Կարմիր (Լուսաբռնկում)
Թուղթ լիցքավորված չէ	Երբ տրվել է տպելու հրահանգ, իսկ թուղթ լիցքավորված չէ	Կարմիր (Լուսաբռնկում)
Ներկառուցված ծրագրի թարմացում	Երբ սարքը թարմացնում է ներկառուցված ծրագիրը	<< >> Սպիտակ (Շողացող)
Մարտկոցի լիցքավորման սպառում	Երբ մարտկոցի լիցքը հասել է 20%-ի - Սարքը կապակցված չէ հավելվածի հետ	Սպիտակ>Կարմիր (Լուսաբռնկում)
	- Սարքը կապակցված է հավելվածի հետ	Սպիտակ>Կարմիր
Բարձր ջերմաստիճան	Երբ սարքը չափազանց շատ է տաքացել	Կարմիր (երբ վերականգնվում է նորմալ ջերմաստիճանը)
Տպիչի գլխիկի հովացում	Ստուգում է տպիչի գլխիկի ջերմաստիճանը և հովացնում է այն նախքան տպելը	<< >> Երկնագույն (Շողացող)
Ցածր ջերմաստիճան	Երբ սարքը չափազանց շատ է սառչել	Երկնագույն (երբ վերականգնվում է նորմալ ջերմաստիճանը)

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐ

Հոսանքի աղբյուր	Ներկառուցված վերալիցքավորվող մարտկոց 500 մԱժ լիթիում-պոլիմեր 7,4 Վ
Լիցքավորման արագությունը	Մոտավորապես 45 րոպե (ամբողջությամբ լիցքավորվելու համար)
Չափեր	120 մմ (Ե) x 84 մմ (L) x 21,5 մմ (Բ)
Քաշ	177 գ
Կապակցելիություն	Bluetooth® 5.0
Համատեղելի ԳՀ	iOS 12.0 կամ բարձր և Android 6.0 կամ բարձր
Տպման տեխնոլոգիա	ZINK®
Տպման տարլուծում	313 x 512 dpi (կետ դյույմի վրա)
Անշրջանակ տպում	Այո
Համատեղելի թղթեր	Canon ZINK® լուսանկարների թուղթ. ZP-2030-20 (20 թերթ) ZP-2030-50 (50 թերթ) ZP-2030-2C-20 (20 թերթ) 2" x 3" / ինքնակպչուն թուղթ
Թղթի տարողունակություն	Մինչև 10 ZINK® լուսանկարի թուղթ + 1 կապույտ SMART SHEET®
Հիշողություն	512 Մբ
Միջավայրային պարամետրեր	• Տպման գործընթացի, լիցքավորման և պահպանման համար խորհուրդ տրվող ջերմաստիճան՝ 15º–32º C • Տպման գործընթացի, լիցքավորման և պահպանման համար խորհուրդ տրվող խոնավություն՝ 40-55% ՀԽ • Աշխատանքային ջերմաստիճան՝ 5º-ից 40ºC • Աշխատանքային խոնավություն՝ <70% ՀԽ
Ինքնաշխատ անջատում	3 րոպե / 5 րոպե / 10 րոպե (կարելի է ընտրել հավելվածից) (Տպիչն ինքնաշխատ կերպով չի անջատվի, եթե հավելվածն օգտագործման մեջ է)
Հոսանքի հարմարիչ	Ելքային հոսանք. 5Վ ⎓ 2,25Ա կամ ավելի բարձր

* Տեխնիկական բոլոր տվյալները ենթակա են փոփոխման առանց ծանուցման

* Zoemini 2 Mini Photo Printer-ը նախատեսված է USB լիցքավորման հարմարիչի միջոցով:
Եթե այն լիցքավորվի լափթոփի համար նախատեսված USB միացքով, ապա էլեկտրական հոսանքը կարող է բավարար չլինել Zoemini 2 Mini Photo Printer-ը լիցքավորելու համար:

ՏԱՐԲԵՐԱԿ ①
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ԽԱՆՈՒԹՆԵՐՈՒՄ ՈՐՈՆԵՔ «CANON MINI PRINT»

Android™ համակարգի համար՝ Google Play™-ից





iOS® համակարգի համար՝ App Store®-ից



ՏԱՐԲԵՐԱԿ ②
ՍԿԱՆԱՎՈՐԵՔ «ԱՐԱԳ ՄԵԿՆԱՐԿԻ ՈՒՂԵՑՈՒՅՑԻ» QR ԿՈԴԸ՝ CANON MINI PRINT ՀԱՎԵԼՎԱԾԸ ՆԵՐԲԵՌՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Android-ի դեպքում



iOS-ի դեպքում



ՏԱՐԲԵՐԱԿ ③
ՁԵՐ ՍԱՐՔԻ ՀԱՄԱՑԱՆՑԻ ՁՆՆԻՉՈՎ ԲԱՑԵՔ HTTPS://APP.CANONMINIPRINT.COM/

Android-ի և iOS-ի զուգավորումը

① Միացրեք տպիչը՝ սեղմելով և սեղմած պահելով հոսանքի կոճակը այնքան, մինչև կարգավիճակի LED լույսը վառվի:
Բացեք շարժական սարքի «Կարգավորումները», ակտիվացրեք Bluetooth-ը և զուգավորեք տպիչի հետ:

② **Զուգավորում.** հպեք վերևի աջ անկյունի պատկերակին և ընտրեք ձեր տպիչը: Կապակցումից հետո պատկերակը կփոխվի՝ ցույց տալու մարտկոցի լիցքավորման մակարդակը:







③ **Տպիչի վերակապակցում.** զուգավորված ժամանակ տպիչն ավտոմատ կվերակապակցվի հավելվածին: Եթե տպիչը չի կապակցվել հավելվածին, հպեք վերին աջ անկյունի պատկերակին և ցանկից ընտրեք ձեր տպիչը:



ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Տպիչի կարգավիճակի պատկերակ (ցուցադրվում է հավելվածում)

Տպիչը կապակցված չէ

Տպիչը կապակցված է
(ցուցադրվում է մարտկոցի կարգավիճակը)

Տեղեկություններ զուգավորման մասին

- Մեկ տպիչը կարող է զուգավորվել միայն մեկ iOS/Android սարքի հետ:
- Մեկ iOS/Android սարքը կարող է կապակցվել մի քանի տպիչի հետ: Լրացուցիչ տպիչ զուգավորելու համար բացեք գլխավոր էջը, հպեք վերին աջ անկյունի պատկերակին և սեղմեք ⊕՝ տպիչն ընտրելու համար:
- Գտեք և զուգավորեք «Canon (xx:xx) Mini Printer» անվանումով տպիչը: Տպիչի ներսում փակցված պիտակի MAC number (xx:xx)-ի վերջին 4 թվերը պետք է համընկնեն:
- Bluetooth-ով որոնումը և փոխանցումը կարող է չհաջողվել՝ կախված միջավայրից: Ստուգեք ձեր շարժական սարքի Bluetooth-ի կարգավորումը և փորձեք նորից:





ՕԳՏՎՈՂԻ ՄԻՋԵՐԵՍ

ԳԼԽԱՎՈՐ ԷԿՐԱՆ

Մուտքային

Տպման հերթագրում

Հիմնական ընտրացանկ

Տպիչի կարգավիճակ

Լուսանկարների ալբոմ

Նախակտրված կպչուն պիտակ

Կոլաժ

Սմարթֆոնի տեսախցիկ

ՀԻՄՆԱԿԱՆ ԸՆՏՐԱՑԱՆԿ





Մուտքի իրավունք զուգավորված տպիչի տեղեկություններին և կարգավորումներին

Առցանց օգտվողի ձեռնարկի և հաճախակի տրվող հարցերի դիտում

Լուսանկարների թղթի գնում առցանց խանութից

Հավելվածի տարբերակի ստուգում, ծանոթացում Օգտվողի համաձայնագրին և Գաղտնիության դրույթին

Կապակցված տպիչ. օգտվողը ցանկացած պահի կարող է դիտել տպիչի մասին տեղեկությունը, հարմարեցնել տպիչի անվանումը, ձայները և ավտոմատ անջատման ժամանակը:

Առցանց ալբոմներ* (Մուտք / Ելք)

Facebook

Instagram

Google Լուսանկարներ

Կախված ձեր սարքից և տարածաշրջանից՝ հավելվածի աշխատանքը, գործառույթները և հասանելի Առցանց ալբոմները կարող են տարբեր լինել:

* Պահանջվում է կապակցում համացանցին: Օգտագործելու համար պահանջվում են սոցիալական ցանցերի կամ ամպային ակտիվ հաշիվ(ներ):

ՏՊԻՉԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Երբ տպիչը կապակցված է շարժական սարքին, օգտվողը կարող է հարմարեցնել տպիչի անվանումը և ավտոմատ անջատման ժամանակը:

Հպեք ☰, ընտրեք ձեր սարքը՝ տպիչի անվանումը և ինքնաշխատ անջատման ժամանակը հավելվածի միջոցով հարմարեցնելու համար:

ՎԵՐԱՆՎԱՆՈՒՄ

Օգտվողը կարող է ըստ ցանկության հարմարեցնել տպիչի անվանումը:





ԻՆՔՆԱՇԽԱՏ ԱՆՋԱՏՈՒՄ

Հպեք՝ ավտոմատ անջատման ժամանակը փոխելու համար:





Canon

Եթե սարքը ճիշտ չի աշխատում, դիմեք ձեր ներկայացուցչին, որից գնել եք այս ապրանքը կամ Canon-ի սպասարկման և աջակցման կենտրոնին՝ www.canon-europe.com/support հղումով

SMART SHEET, ZINK Technology և ZINK ապրանքանիշները հանդիսանում են ZINK Holdings LLC-ի սեփականությունը: Օգտագործվում են լիցենզիայի հիման վրա: Apple-ը, Apple-ի տարբերանշանը, iPad-ը, iPad Air-ը, iPad Pro-ն և iPhone-ը հանդիսանում են Apple Inc. ընկերության գրանցված ապրանքանիշներ Միացյալ Նահանգներում և այլ երկրներում: App Store-ը Apple Inc. ընկերության ծառայության նշանն է: iOS-ը Միացյալ Նահանգներում և այլ երկրներում Cisco ընկերության ապրանքանիշն է կամ գրանցված ապրանքանիշը և օգտագործվում է լիցենզիայի հիման վրա: Android-ը և Google Play-ը Google LLC ընկերության ապրանքանիշներն են: Bluetooth-ը Bluetooth SIG ընկերության գրանցված ապրանքանիշն է: Wi-Fi-ը Wi-Fi Alliance ընկերության գրանցված ապրանքանիշն է: Մնացած բոլոր երրորդ կողմերի ապրանքների անվանումները, առևտրային անվանումները և տարբերանշանները իրենց համապատասխան սեփականատերերի ապրանքանիշներն են:

© CANON ELECTRONIC BUSINESS MACHINES (H.K.) CO., LTD. 2022

PV-223-HY-202201